ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

17.05.2013թ.
201-ի 3

"Դուստր Մարիաննա" ՍՊԸ-ի տնօրեն
պարոն Տիգրան Վարդանյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Վարդանյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 18.11.2011թ-ին տեղեկատվություն ստանալու գրավոր հարցում էր ուղարկել "Դուստր Մարիաննա" ՍՊԸ տնօրեն Տիգրան Վարդանյանին՝ խնդրելով հայտնել.

1. Ձեր կաթնամթերքը արտադրվում է բնակա՞ն կաթից, թե՞ կաթնափոշուց:
2. Խնդրում ենք տրամադրել ցանկը, թե Ձեր ընկերության կաթնամթերքներից որն է բնական կաթից, որը՝ ոչ, եւ/կամ որ արտադրատեսակի մեջ բնական կաթի քանակն ինչքան է:

Հարցմանը պատասխան չստանալով՝ ԻԱԿ-ը դիմել է դատարան: ՀՀ Վարչական դատարանը 2013թ.-ի փետրվարի 19-ին կայացրել է վճիռ ԻԱԿ-ի օգտին, այն է՝ ճանաչել է "Դուստր Մարիաննա" ՍՊԸ-ի պատասխանի ոչ պատշաճությունը:

Ուստի, ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ կրկին խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ձեր կաթնամթերքը արտադրվում է բնակա՞ն կաթից, թե՞ կաթնափոշուց:
2. Խնդրում ենք տրամադրել ցանկը, թե Ձեր ընկերության կաթնամթերքներից որն է բնական կաթից, որը՝ ոչ, եւ/կամ որ արտադրատեսակի մեջ բնական կաթի քանակն ինչքան է:

"Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան